

ժեշտություն է նրանով որ գրելն արևեստագետ մի հայ կին է: Դա ուշադրաբար մի երեւոյթ է 15-րդ դարի գրչագրական արևեստի պատմութեան մէջ: Անթիստելի է, որ հնագոյն շրջանում ունեցել ենք զեղադրութեան ձևերով օժտւած հայուհիներ, որոնք զարկ են տւել գրչութեան մշակոյթին: Դրանցից յայտնի է կիլիկիացի հայուհի Զապէլը, որի մասին կարդում ենք. «Ի հին պատմութեան Սոսյ լուսայ, թէ Բարձրաբերդցի կոստանդին քահանայի դուստր Զապէլ կոչեցեալն պաշտէր զմանրութեամբս, եւ էր հմուտ ընթերցողութեան եւ արևեստին գրչութեան»:

1650 թւականին յիշուած է Մարիամէ գրիչը, որ Արկուզ գիւղում արտադրել է «Վարք Հարանց անապատականաց»-ը: Երեք տարի անց, 1653 թւին, Հալիճորի ս. Կոյս Աստածածին վանքում քոյր Հռիփսիմէն արտադրել է «Մեկնութիւն ժամագրքի», «Նարեկացի» եւ «Պոստով Մեծ» ձեռագրերը: Յիշուած է նաեւ կոյս Վառվառին, որ 1655 թւականին արտադրել է «Ժամագրք»-ը: Այնուհետեւ 1657-ին, Վարդեմին գրել է «Սանդուխտի գրք»-ը: 1673 թւականը տանում է ձեռ գրչերի վանքը, ուր քոյր Երիմէն գրել է «Ատենի ժամագրք»-ը: Ահա եւ փոքր-Սիւնեաց վանքը, ուր 1684 թւին, կոյս Վառվառն արտադրել է Գրիգոր Տաթեւացու «Ճանդնորդ քարոզներ»-ը: Արձանագրերնք նաեւ քոյր Շուշանի անունը, որ Շոթատի ս. Կոյս Աստածածին վանքում, 1684 թւին, արտադրել է պատմագիր Մովսէս Սորենացու եւ Եղիշի պատմութիւնները: Ահա այս զեղադր հայուհիների շարքում պատւաւոր տեղ է գրաւում նաեւ գրչագիր Մարիամը: Այդ հանգամանքն են նշում ձեռագրի տարբեր էջերում ընդգծւած սեղմ տողերը, որոնց պատկերն է.

- Չբազմամեղս յամի (յամենայնի) զՄարիամ անուն, որ միայն զանունս իմ եւ ո՛չ գիր եւ ըզ-ծնողսն իմ աղաչեմ յիշեալ 'ի Տէր բարի կամաւք (էջ 261):
- Այլեւ ես մեղօք մածեալ եւ մոլորեալ ոգի Մարիամ սիրող բանի յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողսդ զի եւ մեզ խնդրեցէք զթողութիւն 'ի յահեղ ատեան Քրիստոսի (էջ 433):
- Եւ զանպիտան Մարիամ գրիչս յիշել աղաչեմ վասն Աստծոյ. ո՛վ ոք հանդիպէք (էջ 645):

Այս յիշատակարաններն էլ հաստատում են, որ ձեռագրերը գրւել է արևեստագետ Մարիամի գրչ-

չով: Սակայն, գրչագրի զեղեցկութիւնը կաղմում են մէկը միւսից տարբեր ոճերով եւ բովանդա-կութեամբ վրձինւած մանրանկարները, որոնցից յատուկ ուշադրութեան արժանի է 16-րդ էջի խո-րանը: Դա նկարչական արևեստի մի սքանչելի ըս-տեղծագործութիւն է, որ գրւում է ձեզ իր նըր-րութեամբ եւ բանաստեղծական պատկերաւորու-թեամբ: Նշենք նաեւ որոշ լուսանցքներում ձու երանգներով զօւած զեղեցիկ զարդանկարներն ու թռչնազարդերը, որոնք իրենց ինքնուրոյն ոճով, զօյնների ներդաշնակութեամբ եւ զեղարևեստական որոշ նրբութեամբ ձեռագրին առանձին գրաւչու-թիւն են տալիս, միաժամանակ պարզում 15-րդ դարի Հին-Ջուղայի նկարչական դպրոցի էութիւ-նը: Այդ մանրանկարներն այսօր առանձին արժէք ունին նրանով, որ պատկերում են նաեւ հայ նը-կարչական պատմութեան մինչեւ օրս անծանօթ մի նկարչուհու պայծառ գիմաղիծը: Այդ հանգաման-քը հաստատում է ձեռագրի 723-րդ էջի սեղմ, բայց թանկագին յիշատակարանը, որի պատկերն է.

- Յիշեա Քրիստոս Աստուած զանպիտան զծոյս Մարիամ ապաշխարոյս եւ ծնողսն իմ զոգեւոր եւ զմարմնաւորսն եւ զամենայն երախտաւորսն իմ. եւ դուք յիշեալ լիջիք 'ի Քրիստոսէ Աստծոյ մե-րոյ եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Այս տողերն էլ վերջնականապէս պարզում են, որ Մարիամն է ձեռագրի գրիչն ու զծագրիչը: Դա 15-րդ դարի առաջին կիւն Գլարչուհին է, որի վրձինի թանկագին մնացորդները հասել են մեզ եւ ցայտուն դադափար են տալիս նրա ստեղծա-գործական ինքնուրոյն ձիրքի, արևեստի էութեան եւ ոճի մասին, մի արևեստագիտուհի, որ օժտը-ւած լինելով նկարչական հարուստ տւեալներով, ձեռագրերը զարդարել է զեղեցիկ մանրանկարնե-րով, որոնք ընդգծում են նրա հմուտ եւ ձեւա-կերպւած վրձինի մասին: Այդ նկարների շնորհիւ էլ այսօր մեզ հետ խօսում է 491 տարի առաջ մեզանից բաժանւած տաղանդաւոր նկարչուհին, որ հանդիսացել է իր ժամանակի մանրանկարչա-կան արևեստի լուսադոյն դրօշակակիրներից մէկը: Ահա թէ ինչու նա իր վրձինով ունի իր ուրոյն տեղը հայ մանրանկարչութեան եւ գրչագրութեան արևեստի պատմութեան մէջ:

ԹԷԻՐԱՆ
23 Յուլիս 1947

ԱՐԱՍ ԵՐԵՄԵԱՆ



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՆԻԻԹԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: - Գրեց Արտաշէս Հ. Գարտաշեան Տպր. Նուպար, Գահիրէ, 1943: Ութածալ, թղթա-կազմ, 308 էջ, բազմանկար: Գին երկուք ու կէս կամ հինգ տոլար թուղթի տարբերութեան համեմատ:

Շնորհակալութեամբ ստացայ գրախօսելիք հատորս: Ինծի զրկուածը կ'երեւայ թէ «պարզ» թուղթի վրայ տպուած տեսակէն է: Այլապէս մեղք պիտի ըլլար այսպիսի բազմաշխատ (և Եգիպտոսայոց պատմութեան համար կարեւոր աղբիւր) գործը տպագրել նման վատ թուղթի վրայ:

Աշխատութիւնը կ'երեւայ թէ մաս կը կազմէ մէկէ աւելի հատորներու, քանի որ նշանա-կուած է Ա. և Ենթախորագրուած է «Պատ-մութիւն Եգիպտոսայ Եկեղեցիներու և Գերեզ-մանատուններու»:

Աշխատութիւնը իր մտադրութեան մէջ յա-ջողած է և ընտիր յիշատակարան մըն է կե-սարացի Եէտի-Գարտաշեան տոհմին, որուն մէկ անգամը ըլլալ կ'երեւայ հեղինակը, ու դատելով գրքին սկիզբը զետեղած իր նկարէն, երկուս-սարդ մըն է:

Գնահատական գրութիւն մը կայ գրքին սկիզբը մեր բազմաշխատ վաստակաւոր Արշակ Ալապոյաճեանէ, որ հին վարպետ մըն է նման աշխատութեանց, որ նաեւ եղած է մենտորը իր աշակերտ Գարտաշեանի՝ նման աշխատու-թեանց հետեւելու համար:

Աշխատութեան մէջ կը պակսին հին կամ հնագոյն շրջանի նորագիւտ արձանագրութիւն-ներ: Թող որ զարմանալիօրէն Եգիպտոսայ բազմադարեան գաղութը զուրկ է նոյն իսկ գարու ազգային հնութիւններէ: Տապա-նաքարերը, Եկեղեցական արձանագրութիւն-ները, և Եկեղեցական անթմերը հազիւ ժ՛՛՛ղ դարէն են, և մեծագոյն մասամբ ժ՛՛՛ղ դարէն և նոյն իսկ Ի. դարէն: Անտարակոյս մեծապէս արժէքաւոր է անոնց հրատարակութիւնը այս հատորով Եգիպտոսայ նոր շրջանի պատմու-թեան համար:

Արժէքաւոր են այն բազմաթիւ նկարները,

որոնք գրեթէ ամբողջութեամբ անտիպ էին ասկէ առաջ:

Յանկալի պիտի ըլլար գիտնալ թէ էջ 16 թիւ մէկ արծաթապատ յիշատակարանը Շա-րականին, բուն արծաթին վրայ քանդակուած է թէ գրքին մէջ ձեռագրուած: Սխալ է կամ բացատրութեան կը կարօտի թէ Բնչպէս 1801ին «Քիւրքճիւ Խանին մէջ, Մահտեսի Աստուա-ծատուրեան Յովհանէսի տպարանը» տպուած Շարակնոցը 1757էն յիշատակարան մը կրնայ ունենալ: Այսպէս ուրիշ տեղեր ալ զանց ըրած է յիշել թէ յիշատակարանը արծաթին վրայ է թէ գրքին մէջ գրուած: Յաճախ չի յիշեր թէ անթմերը զոր կը ցանկէ կամ յիշատա-կարան ունին՝ արծաթ են, պղինձ թէ այլ մե-տաղ, բան մը որ կարեւոր է:

Անտարակոյս անուշադրութեան արդիւնք է երբ էջ 87ին վրայ արձագանգ կ'ըլլայ ծանօ-թութեան մը «... ի Թուին Հայոց 810 որ է Թուական Փրկչին Յիսուսի 1331»: Հայոց 810 հաւասար է 1361ին և ոչ թէ 1331ին: Գրեւը Ստեփանոս, բնականաբար անծանօթ հեղինա-կին, ծանօթ է իբր բազմադրիւն Ստեփանոս Տիւրիկցի գրիչը, որմէ հինգ ձեռագրիներ ար-գէն ծանօթ են մեզի:

Նոյն ատեն ուշիմութեամբ ուշադիր եղած է Մկրտիչ Սրբազան Աղաւնունիի մէկ շատ խոշոր սխալին: Սրբազանը իր Միաբանք և Սյցե-լոյքի մէջ էջ 218 կը խօսի ագամանդակուռ ոսկիէ սկիւնի մը մասին տալով նաեւ նուիրա-բերողին «Եգիպտոսի Զարպիսանէի Սարաֆ Սիսիանցի..... Համբարձում ամիրային» յի-շատակարանը և տալով ՌձՁԹ (1740) թուա-կանը, որով արժէքաւոր նպաստ մը կ'ըլլար մեր ոսկերչական պատմութեան համար: Արդ, Գարտաշեան մեղի կու տայ նոյն Ամիրային ու-րիշ յիշատակարանները, անոր պարագաներուն տապանաքարերը, որոնք տարակոյս չեն թողուր որ ՌձՁԹ (1740) սխալ է և պէտք է ըլլայ ՌՄՁԹ (1840):

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԷԶՄԻԱՆԻՆ. - Պաշտօնական Ամսագիր Հայ-րապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Հետզհետէ նոր ստացայ 1945 և 1946ի հոս գրախօսած թիւերս:

1945 Օգոստոս-Հոկտեմբեր թիւը կը շարու-

նակուի հրատարակուիլ նախորդ թիւերուն վատ թուղթին վրայ: Կը տրուի Համազգային-Եկեղեցական Ժողովին մասին ղեկուցումներ և նկարներ:

Իբր կրօնա-պատմական նիւթ՝ Ռուբէն Եւսիպիոս կը շարունակէ «Հայրենասիրութիւնը Խրիստեանի Երկերում» որ կ'երեւայ թէ այս թիւով կ'աւարտի:

Հայագիտական խորագրին տակ Գ. Լեւոնեան կը ստորագրէ «Դարձեալ մի քանի էջ Հայ Երաժշտութեան Պատմութիւնից» և կը խօսի իրեն ծանօթ 18 մանրուամուկներու մասին (Երեւան 6, Վիեննա 8, Վենետիկ 4): Բնական է ասոնցմէ շատ աւելի մանրուամուկներ հասած են մեզի զանազան ձեռագրաց հաւաքմանց մէջ, որոնց ցուցակներուն հրատարակուած չըլլալուն համար՝ Լեւոնեան անոնցմէ չէ կրցիր օգտուիլ: (Մտկադարձ և նկարադարձ գեղեցիկ հատ մըն ալ ունիմ իմ հաւաքմանս մէջ 1439ին Բերդակի անապատը «ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնի և Սբ. Լուսաւորչի» խաչատուր արեւոյն): Իր այս աշխատութիւնը հետաքրքրական է իբր ամփոփող փորձ:

Յաջորդ գրութիւնը ստորագրուած է Պրոֆ. Ա. Աբրահամեանէ, «Կորինի երկու հնագոյն ընդօրինակութիւնները»: Ասոնք են Երեւանի մատենադարանի թիւ 3797⁽¹⁾ (ժԳ-ժԿ դար) և 3787 (նոյնպէս): Կարեւոր նպաստ մըն է Կորինի բնագրին վերականգնութեան համար:

Յաջորդող երկու մանր գրութիւնները նուիրուած են Ա. Խոսհակեանի:

Այս թիւին մէջ հետաքրքրական է Արշակ Աւագյանի «Նամակ խմբագրութեան» որով

կը ջանայ ճշդել Գ. Լեւոնեանի մէկ գրութեան շփոթութիւնը Ստեփանոս անուանեալ Սալմաստեցի և Առնշեցի կաթողիկոսներուն մասին: Ասոր տրուած պատասխանը Լեւոնեանէն, նոյն այս թիւին մէջ, անիմաստ է⁽²⁾:

1945-ի թիւ Նոյեմբեր-Դեկտեմբեր: Այս թիւին մէջ մնայուն արժէք ներկայացնող գրութիւնները են «Գամառ-Քաթիպայի Անտիպ Աշխատութիւնները» և «Բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանի Նամակը Գլադստոնի և Դրա Պատասխանը», երկուքն ալ ստորագրուած Ե. Շահազիզէն:

1946 Յունուար: Առօրեայ, Ժամանակակից գրութիւններէ զատ (մասամբ նկարներով զարդարուած) ուրոնցմէ խոշոր մաս մը արտասովորած է արտասահմանեան թերթերէ, մնայուն արժէք ներկայացնող միայն երկու գրութիւններ կան: Առաջինը ստորագրուած Վարդ Բոյոյեանէ «Գաւթին Սրվանքանցը որպէս Ազգագրագէտ», իսկ երկրորդը Հ. Աճառեանի «Երեք Հարց Մետրոպէան Այբուբենի շուրջը»:

Վերջին գրութեամբ Աճառեան ցոյց կու տայ որ Ս. Մետրոպէայեանի այբուբենը ձեւաւորած է յունարէնէն՝ հետեւելով անոնց ձայնաշարքին: Մինչ յունարէնը միայն երեք գիր ունի հայերէնին մէջ պակտող, ասոնքն հայերէնը 15 տառ ունի որ կը պակտի յունարէնին մէջ: Ը տառը միայն հայերէնի յատուկ է և ուրիշ «ոչ մի այբուբենի մէջ չկայ»: Աճառեանի այս շարունակելի ուսումնասիրութիւնը հետաքրքրական նպաստ մըն է հայերէն այբուբենի համար:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

(1) Պրոֆ. Աբրահամեան ՀՍՍՌ (Երեւանի) մատենադարանի թիւ 3797ին մասին խօսելով կը գրէ «գրչութեան ժամանակը 13-14 դարն է: Գրիչն է Նազիրը, որ յիշուած է բազմաթիւ գլուխների վերջում, «(էջ 40 սիւն Բ.): Կարծեմ կարելի է ըսել որ Կորինի այս կարեւոր օրինակը (թիւ 3797) վերջնականապէս 14րդ դարէն է: Նազիրէն ինծի ծանօթ է ուրիշ ձեռագիր մը, Աստուածաշունչ, գրուած Գրիգոր արեւոյի համար և Սուրխաթ (Ղրիմ) 1346ին:

(2) Միջանկեալ աւելցնեմ, որ իմ ձեռագրաց հաւաքածոյին մէջ ունիմ թղթեայ այժմ անկազմ և պակասաւոր, սակայն լաւ վիճակի մէջ, ծաղկեալ և մանրանը, կարեալ 1477ին «Ստեփանոս Եպիսկոպոս Յաննիսէ»:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

- ՍՏԵՓԱՆ ԵԱՅՊԱՋ. — Վարագոյրին հտեւ. Աղեքսանդրիա, 1946.
 ԿԱՑԻԱԿ ԿԵԻԿԵԱՆ. — Ֆախիր. դրամա. 4 արար, 5 պատկեր. Շտուտկարտ, 1946.
 » — Աման-Աուզի Դեւը, դրամա 4 արարած. Շտուտկարտ, 1947.
 ՎԱՀԱՆ ՀԱՊԵՇԵԱՆ. — Կեանքը կենսաբանական հայեացքով. Նիկոսիա-Կիպրոս, 1947.
 P. Basilius Talatinian. — O. F. M. De Contractu matrimoniali iuxta Armenos, Hierosolymis, 1947.
 Z. Khansadian. — Rapport sur les relations économiques de la France avec les pays du Levant et l'U. R. S. S. Paris, 1947.
 ՏԻՐԱԿՇ. — Ժայռերու ժողովուրդը Ա. հտ. Սէյնթ Փոլ, 1947.

Խմբագրութիւնս իր ջերմագին շնորհակալութիւնը կը յայտնէ ՀԱՍԿ, ԱՐՄԷՆԻԱ, ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻ քերթերու խմբագրութեանց, որոնք հաճած են զրկել մեր հաւաքածոյին պակաս թիւերը, գոյս պատերազմի հետեւանով չէին կրցած ստանալ:

Դարձեալ կոչ կ'ընենք հոս միւս բոլոր հայ օրաքերթերու, ամսաքերթերու, տարեգիրքերու խմբագրութեանց՝ որ հաճին իրենք եւս մեզի առաքելու խնդրուած պակաս թիւերը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, «ԲԱԶՄԱՎԵՊ» Ի

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՍԵՒԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ե. ՀԱՏՈՐ

ԳՈՐԳԸ ՀԱՅՈՑ ՄՕՏ

ԳՐԵՑ՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Գինը տոլ. 3.—

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Ընտիր բանաստեղծութեանց նոր հատորիկը

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒԱԳ

ՇԱՐՔ Ա.

Եկովք Արմենի յառաջարանով. Մամուլի տակ է Հայրենական Համաժողովի շարք Բ. րուսումնասիրական յառաջարանով՝ Այալ Երեւանի:

Գիմել հեղինակին. 3622 Spring Garden St. Philadelphia 4. Pa.